Արձանագրություն N 3

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար դեղորայքի և բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-26/2 » ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան 03 սեպտեմբերի 2025թ.
Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Պողոսյան

Գ. Գալստյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Գրիգորյան

Օրակարգ

1. Հայտերի գնահատման մասին
2. Հանձնաժողովի որոշումների մասին

1. <u>Հայտերի գնահատման մասին</u>

1.1 «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-26/2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստին հանձնաժողովն արձանագրեց, որ հայտերը կազմված են հրավերին համապատասխան բացառությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի, «Արփիմեդ» ՍՊԸ-ի, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի, «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հայտերում բացակայում են «Սահմանված կարգով դեղերի իրացման լիցենզիա»-ն: «Արփիմեդ» ՍՊԸ-ի, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հայտերում բացակայում են «Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների արտադրություն կամ Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների ներմուծում, արտահանում կամ մեծածախ առևտրի լիցենզիա»: «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի Հավելված 1-ում 86-րդ չափաբաժինը ներկայացված է 96-րդ, Հավելվածներ 1.1-ում և 2-ում արձանագրված է 67-ից 73-րդ, 86-րդ, 89-ից 94-րդ չափաբաժինների համարների անհամապատասխանություն հրավերին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հանձնաժողովի որոշումների մասին

Որոշվեց՝

2.1 Հաշվի առնելով «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի, «Արփիմեդ» ՍՊԸ-ի, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի, «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հայտերում արձանագրված անհամապատասխանությունը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի» կազմակերպման մասին կարգի 41-րդ կետով, ինչպես նաև «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի» կազմակերպման մասին կարգի 32-րդ կետի 2-րդ մասի գ ենթակետի համաձայն հայտը մերժման ենթական չէ, հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունը:

2.2 «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ - 26/2» ծածկագրով ընթացակարգի վարման նիստը կշարունակվի 2025 թվականի սեպտեմբերի 05 - ի ժամը 10:00 - ին:

2.3 «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ - 26/2» ծածկագրով ընթացակարգի 2025 թվականի սեպտեմբերի 05 - ի ժամը 10:00 - ի նիստին արձանագրվեց, որ սահմանված ժամկետում շտկում ներկայացրել են «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն, «Արփիմեդ» ՍՊԸ-ն, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ն, «Արֆարմացիա» ՓԲԸ-ն , «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն:

2.4 Հաշվի առնելով, ներկայացված շտկումները, Հանձնաժողովը որոշեց «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-26/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին 89, 104, 110, 115, 122, 137, «Արփիմեդ» ՍՊԸ-ին 39, 40, 56, 58, 74, 77, 141, 144, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ին 21, 28, «Արֆարմացիա» ՓԲԸ-ին 1, 12, 25, 31, 37, 60, 62, 71, 78, 79, 80, 81, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին 2, 5, 6, 7, 8, 10, 11, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 23, 24, 26, 27, 29, 30, 32, 35, 36, 38, 41, 44, 45, 47,48, 49, 50, 51, 52, 54, 55, 57, 59, 61, 63, 64, 65, 68, 70, 72, 82, 84, 85, 86, 87, 88, 90, 91, 92, 93, 94, 95, 100, 101, 105, 107, 108, 109, 111, 113, 114, 116, 117, 118, 119, 120, 121, 123, 124, 125, 127,128,129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 139, 140, 142, 143, 145, 146, 147, 148, «Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ին 149-րդ և 150-րդ, «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ին 151-րդ չափաբաժինների համար:

2.5 «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-26/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 3, 4, 9, 22, 33, 34, 42, 43, 46, 53, 66, 67, 69, 73, 75, 76, 83, 96, 97, 98, 99, 102, 103, 106, 126, 138 չափաբաժինները հայտարարել չկայացած:

2.6 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ:

Անգործության ժամկետը սահմանվում է 10 օրացուցային օր, ներառյալ 18 սեպտեմբերի 2025:

2.7 Անգործության ժամկետի ավարտին չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Լ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Դ. Պողոսյան

_____ Գ. Գալստյան

Քարտուղար՝ _____ Մ. Գրիգորյան